Խաղաղության համար

ՀԱՆՈՒՆ ՀԱՎԵՐԺ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Հունիսի 10-ին, հինգշաբթի օրը, ժամը 16-ին, Երևանում, Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի կոմիտեի դահլիճում, տեղի ունեցավ մայրաքաղաքի հասարակայնության ժողովը՝ Խաղաղության համաշխարհային խորհրդի Ստոկհոլմի նոր կոչը ստորագրելու համար: Ստոկհոլմի նոր կոչը ջերմ արձագանք գտավ նաև Հայաստանի աշխատավորության շրջանում:

Խաղաղության համաշխարհային խորհուրդը Ստոկհոլմի առաջին կոչի 25-ամյակի առթիվ հունիսի 2-ին ընդունել էր Ստոկհոլմի նոր կոչը, որով դիմել էր աշխարհի հասարակայնությանը՝ ծավալելու համաժողովրդական գործողություններ հանուն երկրի վրա կայուն և տևական խաղաղության, հանուն սպառազինությունների մրցավազքի դադարեցման, հանուն միջուկային զենքի և մասսայական ոչնչացման զենքի մյուս բոլոր տեսակների արգելման, հանուն ընդհանուր և լրիվ զինաթափման, հանուն միջազգային լարվածության թուլացման, որպեսզի ստեղծվի նոր տնտեսակարգ, կառուցվի ավելի արդար և մի նոր աշխարհ:

Ժողովին ներկա էր նաև Հայոց Հայրապետը: Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանն ու «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը:

Սույն ժողովին ներկաները ջերմորեն ընդունեցին Խաղաղության համաշխարհային խորհրդի Ստոկհոլմի նոր կոչը, որը հրապարակվեց ժողովում:

Այնուհետև սույն կոչի պաշտպանությամբ հանդես եկան մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ, գիտնականներ, մտավորականներ, արվեստագետներ, շինարարներ, բանվորներ, որոնք վճռականորեն պահանջում էին դադարեցնել սպառազինությունների մրցավազքը, արգելել միջուկային զենքի բոլոր տեսակները և մասսայական ոչնչացման մյուս

միջոցները, որպեսզի մեկընդմիշտ բացառվեն պատերազմների ծագման հնարավորությունները:

Ժողովում ճառով հանդես եկավ նաև Հայոց Հայրապետը, Որին բոլոր ներկաները ողջունեցին ջերմ ծափահարություններով.

«Այսօր մենք հավաքվել ենք ողջունելու Խաղաղության համաշխարհային խորհրդի Ստոկհոլմի կոչը, որը նոր կարևոր քայլ է համայն աշխարհում խաղաղության համար պայքարի գործում: Մենք լավ հիշում ենք Ստոկհոլմի նախորդ կոչի մեծ ներգործությունն աշխարհի ճակատագրի, մարդկանց մասսայական ոչնչացման ատոմային զենքը արգելելու, խաղաղության, զինաթափման և այլ հարցերում, որոնց լուծումով շահագրգռված են աշխարհի բոլոր ժողովուրդները: Ահավասիկ մի նոր կոչ, որն ուղղված է սպառազինությունների մրցավազքի կանխմանը մարդկության կյանքից ճնշման ու շահագործման, սովի ու աղքատության իսպառ բացառմանը: Սովետական Միությունը, որը խաղաղության համաշխարհային շարժման ամենահզոր դրոշակակիրն է, աներեր կանգնած է խաղաղության դիրքերում, անում է ամեն ինչ, որպեսզի չմթագնի ժողովուրդների երջանկությունը, որպեսզի չկրկնվեն երկրորդ համաշխարհային պատերազմի ողբերգությունները»:

Այնուհետև ժողովի մասնակիցները՝ գիտության, գրականության, մշակույթի գործիչներ, ինժեներներ, բժիշկներ, մանկավարժներ, բանվոր-ծառայողներ, մամուլի աշխատողներ, ուսանողներ, խանդավառությամբ իրենց ստորագրությունները դրեցին Խաղաղության համաշխարհային խորհրդի Ստոկհոլմի նոր կոչի տակ:

Սույն կարևոր փաստաթղթի տակ Իր ստորագրությունը դրեց նաև Հայոց Հայրապետը, ինչպես նաև Նորին Սրբությանն ուղեկցող տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և Ա. Հատիտյանը: